«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ»

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Հ/Ձ
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և
«ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

քաղաք Երևան «15» 07 2025թ.

Սույն համագործակցության հուշագիրը կնքվում է **«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Հ/Ձ** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Համալսարան) և **«ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության** (այսուհետ նաև՝ Քոլեջ) միջև:

1. Համագործակցության նպատակը

1.1 Սույն հուշագրով Համալսարանը և Քոլեջը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

1.2 «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ Հ/Ձ ՍՊԸ-ն իր գործունեության հիմնական նպատակն է համարում աշխատաշուկայի կարիքներին համահունչ որակյալ կրթության ապահովումը և իր պատրաստակամությունն է հայտնում իր ուսանողներին տալ միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական պատրաստվածություն՝ անընդհատ բարելավելով ու կատարելագործելով մատուցվող կրթական ծառայությունների արդյունավետությունն ու որակը:

1.3 «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Հ/Ձ ՍՊԸ «Բուժական գործ», «Ստոմատոլոգիա», «Կառավարում» մասնագիտությունների և «ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ»՝ «Քույրական գործ», «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա», «Դեղագործություն», «Սպասարկման կազմակերպում» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների ոլորտներում՝ ապահովել փորձի փոխանակում, կազմակերպել բաց դռների օրեր, մասնագիտական կողմնորոշման օլիմպիադաներ, սեմինարներ, խորհրդատվություններ Քոլեջի ուսանողների համար:

1.4 Կազմակերպել դասավանդողների և երիտասարդ դասախոսների մասնագիտական

կատարելագործմանն ուղղված միջոցառումներ՝ նորարարական դասավանդման մեթոդների բարեփոխումների նպատակով

1.5 Հանդես գալ նոր նախաձեռնություններով և առաջարկություններով, որոնք կբխեն կրթական ծրագրերի նպատակներից, մեր առջև դրված խնդիրներից: Զարգացնել կապը Կարիերիայի և միջազգային հարաբերությունների կառույցների հետ:

2. Համագործակցության Սկզբունքները

2.1 Համալսարանը և Քոլեջը սույն հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

3. Եզրափակիչ դրույթներ

2.2 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.3 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

2.4 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

4 Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Համալսարան

«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ք. Երևան, Սեբաստիա 3/7
Հեռ. +374 77747018

Ռեկտոր՝ _____ Ա.Գ.Իվանով

Քոլեջ

«ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ»

Ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 19
Հեռ. +374 77261201

Տնօրեն՝ _____ Ն.Գ.Գասպարյան